

ՄԵԼԿ

Ցարական գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլ.
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բայ է առաւօտեան 10—2 ժամ
(բայի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԹԻՖԼԻՍԻ ԿՐԵԴԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութիւնը հրապարակում է ցանկացողներին յանձն առնել գեներալ-մայոր Տէր-Ասատուրովի նախկին տան կապով, որը գտնվում է Թիֆլիսում, Երևանեան հրապարակի վրա, Պուշկինսկայա փողոցի և Միջին-փողոցի անկիւնում: Պայմանագրերը կարելի է տեսնել Ընկերութեան վարչութեան մէջ ամէն օր, առաւօտեան 11 ժամից մինչև 1 ժամ կէսօրից յետոյ:

Ցայտարարութիւնները կընդունվեն մինչև ներկայ ապրիլ ամսի 20-ը Ընկերութեան վարչութեան մէջ, Սերգիեյևսկայա փողոցում, Ամիրազովի տանը:

1—3

ԲՈՎԱՆԿԱՌՈՒԹԻՒՆ

Կնոջ դիրքը ամուսնութեան մէջ.—ՆՆՐԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց թատրոն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՌԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերեզմանատան խնդիրը. Արտաքին լուրեր.—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ.— ԹԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գաւառական հերոսներ.

ԿՆՈՋ ԳԻՐԲԸ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Մենք ասեցինք մեր նախընթաց յօդուածում, որ եկեղեցին ընդունում է մի քանի պատճառներ, որոնց հիման վրա մարդ ու կինը կարող են միմեանցից բաժանվել, և ինչպէս ամուսնական կապերը, բայց այդ պատճառները միշտ միակողմանի են կրնում, այսինքն միշտ են տալիս բաժանվող ամուսնականներին միայն մէկին ապահովում և զարգացնում են նորից ամուսնանալու, իսկ միւս կողմից դատապարտում են այլ ևս երբեք (գոնէ մինչև միւս կողմի մահը) չը պահպանել:

Բայց նախ քան խօսելու այն դրութեան մասին, որը ստեղծում է միմեանցից բաժանված կնոջ և մարդու համար եկեղեցու կողմից կայացած վճիռը, տեսնենք թէ ի՞նչ է լինում ամուսնական հասարակական դրութիւնը, երբ այս կամ այն ներքին անհամաձայնութիւնների պատճառով, նրանք միմեանցից իրանց կամքով են բաժանվում, միմեանցից հեռանում են, դեռ ևս եկեղեցական իշխանութեան վճիռն իրանց դատը ներկայացրած չը լինելով:

Այդ տեսակ դրութեան մէջ մարդու և կնոջ վիճակը միմեանցից տարբեր է լինում և դարձեալ կնոջ դրութիւնը ասելի

աննախնայելի է հանդիսանում, քան մարդու: Մարդը, իր կամքով բաժանվելով իր կնոջից, կամ կնոջից թողած լինելով թէև նորից ամուսնանալու իրաւունք ձեռք բերւած չը լինելով, դարձեալ որպէս տղամարդ, շարունակում է անխախտ կերպով լինութեամբ վայելել իր բոլոր քաղաքացիական նախկին իրաւունքները, բայց կնոջ իր կամ մարդու կամքով հեռացած լինելով մարդուց, այնուհետև դառնում է մասամբ իրաւազուրկ քաղաքացի, կորցնում է իր քաղաքացիական իրաւունքներից շատերը: Այդ տեղ հանդէս են գալիս հետեւեալ հակասութիւնները. իրապէս իր մարդու կինն այլ ևս չը լինելով, կինը դարձեալ շարունակում է իր մարդու ազգանունը կրել, նրանից բաժանված լինելով, պէտք է ապրի մարդու ձեռքով տուած անցած իրաւունքներից, բայց սրանից իր նախկին մարդու կին իրապէս այլ ևս չը լինելով, նա թէ կողմնառէ ի մահ հիւանդ լինելու և անհրաժեշտութիւն գգաք, որ օտար տեղ գնալու, բռնկվելու համար, քաղաքից դուրս մի քայլ անգամ անել չէ կարող, առանց մարդու զրաւոր թոյլտւութեան: Ուրեմն մի մարդկային արարած, ոչինչ անկերեւ յանցանք գործած չը լինելով, իրաւազուրկ քաղաքացի է դառնում, միայն այս անգամ նոյն իսկ մարդու ստիպմամբ... Եւ եթէ մարդուն թողած, կամ նոյն իսկ մարդու կամքով անից հեռացրած կինը կարող է իր ապրուստի համար մի օր և է թողակ պահանջել իր մարդուց, նա պէտք է իր համար այդ շրջանում պահանջէ դատարանի միջոցով, այն ինչ ամուսնական կապերը կապող և այդ կապերը խզող, ամուսնական իրարից բաժանելու միակ իրաւունք ունեցող, ամուս-

նական հարցերի մէջ միակ ձեռնհաս (կօնպէտէնտ) իշխանութիւնը, եկեղեցին՝ չէ էլ նախատեսնում այդ տեսակ ամուսնական անհամաձայնութիւնների պատճառով առաջ եկած բաժանումից կնոջ համար հաւանորէն լինելի նեղ նիւթական վիճակը: Եկեղեցին ոչինչ կանօններով չէ սահմանում մարդու պարտաւորութիւնը իր նախկին կնոջը նիւթապէս պահելու, որին շատ անգամ մարդը ինքն իր կամքով է հեռացրել իր տնից: Այդ բաւական չէ. նիւթապէս նեղ վիճակի մէջ ընկած, մարդուց բաժանված կնոյն, ուղենայով որ և է պաշտօն, պարապմունք, զործ ստանալու, իր ամենանհրաժեշտ ապրուստը հայթայթելու համար, շարունակելով դարձեալ իր մարդու ազգանունը կրելու, պարտաւոր է դրա համար իր նախկին մարդու, որից նա իրապէս բաժանված է, և որի հետ նա այլ ևս ոչինչ բարոյական կապեր չունի, դրաւոր թոյլտւութիւնն ունենալ, եթէ այդ տեսակ պահանջ կը ցանկանայ դնել աշխատանք առաջարկող անձնաւորութիւնը, կամ հաստատութիւնը:

Վերջապէս ամուսնական խնդիրներով կայանում է իրապէս արդէն իրարից բաժանված ամուսնականներին բաժանելու եկեղեցու կողմից պաշտօնական վճիռը: Բաժանվող ամուսնականներին միմեան ապահովում տալու և նորից պահպանելու իրաւունքը շնորհելու համար մեծ մասամբ անհրաժեշտ է լինում միւս կողմի անբարոյականութիւնն ապացուցանել: Առում էնք ապացուցանել, որովհետև անբարոյականութեան իրողութիւնը եկեղեցու պահանջմամբ դարձեալ պէտք է վկանել ի դրաւոր ստորագրութեամբ լինի:

Եւ երբ որ այդպիսով բաժանվող ամուսնականներին միմեան իր վրա է վերցնում անբարոյականութեան պատճառը (որ մեծ մասամբ կամուր, շինծու կերպով սարքած է լինում, միմայն պահանջվող ձեռք կատարած լինելու համար), ամուսնականներից միմեան ազատութիւնն ապահովելու նորից ամուսնանալու իրաւունքը շնորհելու համար, ամուսնականներին առաջինը, այսինքն գոհ չը մընում է ընդմիջում (գոնէ մինչև իր նախկին ամուսնու մահը), իրաւազուրկ, ապօրինի

քաղաքացիական դրութեան մէջ, երբեք իրաւունք չունենալով, նորից օրինական կերպով ամուսնանալու:

Այդտեղ էլ երբ որ զոհը, բաժանման առիթ տուող պատճառն իր վրա առնողը, տղամարդ է լինում, նա, թէև այնուհետև կորցնում է նորից ամուսնանալու իրաւունքը, բայց դարձեալ, որպէս տղամարդ, շարունակում է անխախտ կերպով լինութեամբ վայելել իր բոլոր մնացած քաղաքացիական իրաւունքները: Բայց երբ որ բաժանման պատճառ յանձն առնողը կինն է լինում, նա, թէև ազատվում է իր մարդու ազգանունն կրելու պարտաւորութիւնից և նորից ձեռք է բերում իր հօրական ազգանունը, բայց դարձեալ նրա դրութեան մէջ շատ զգալի փոփոխութիւն գէպի լաւ չէ առաջ գալիս. բաժանված և իր հօր ազգանունը կրող կնոյն, ինչքան էլ տարիք ունենայ, միանգամայն կրկին դառնում է անչափահաս և այնուհետև իր հօր համաձայնութեամբ տուած անցած իրաւունքով պէտք է ապրի: Իր հօր ազգանունը կրելով և բոլոր երեւոյթի կրկին ազատ դառնալով ամուսնական բաժանման պատճառը յանձն առած կնոյն այլ ևս, մինչև նախկին մարդու մահը, չէ կարող նորից ամուսնանալ, թէև հիմա՝ մարդը, վերջապէս, կնոյն անբարոյականութիւնը ապացուցած լինելով, ապահովում է ձեռք բերելու իրաւունքը բաժանվող նորից ամուսնանալու: Եւ երբ նա իրաւունք ամուսնանալու է մի ուրիշ կնոջ հետ, նրա նախկին կնոյն, այժմ իր հօր ազգանունը կրելով, դարձեալ երբեք իր անգամ ամուսնանալ չէ կարող, չը նայելով որ իր նախկին մարդու ազգանունը կրում է այժմ մի ուրիշ կին:

Այս հետգհետէ հանդէս են գալիս և հետեւեալ անբացատրելի հակասութիւնները:

Ահա մեռնում է բաժանված կնոյն նախկին մարդը, որը ապահովում է ձեռք բերած լինելով արդէն ուրիշ կնոջ հետ էր պահված, և յանկարծ այդ մահով միանգամայն երկու կանայք են ազատվում և ստանում նորից ամուսնանալու իրաւունքը՝ մեռածի վերջին կնոյն և նոյն մարդու նախկին կնոյն... Այդպիսով յայտնվում է մի տարօրին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՀՆՐՈՍՆԵՐ

(Ներածութիւն)

Գրողն էլ, ինչպէս և ամէն մի մահկանացու, ունի զարմանալի, անհասկանալի քաղաքական հերք: Շատ անգամ նա թողնում է այն, ինչ որ պարտաւոր էր և կարող հեշտութեամբ անելու և ընկնում է այնպիսի անգիտ, ուր միայն զգուշութիւն կայ նրա համար: Գիտե՞ք թէ նա ուրում է ժամանակակից մարդկանց պատկերները նկարագրել. նա նպատակ է ընտրել այդ պատկերներից լաւերն ընտրել, այնպիսիները, որոնց վրա դէպք կայ, միտք, հայեացք, նշանակութիւն կայ: Եւ դրա համար նա—չէր զարմանում—ճանապարհորդական պաշտօնական և վերցնում, դէս ու դէն է գնում, բոլորովին նոր, բոլորովին անծանօթ մարդիկ է որոնում և սկսում է նրանց ուշադրութեամբ դիմել, սկսում է նրանց հաղորդակցել: Այն ինչ նա կարող է իր տեղը նստել, իրան նեղութիւն չը պատճառել և վերցնել իր ծանօթներին, դրանց պատկերները նկարագրել:

Արդե՞ք մոլորվում է գրողը այդ յատկութիւնը, թէ մի հաստատ օրէնք, որ ունի ամէն օրէնքին յատուկ հաստատ հիւնքերը—ևս չը գիտանի Միայն գիտանի որ այդ յատկութիւնը շատ զարմանալի է: Ինքում եմ օրինակ:

Կովկասի կապուտակ երկնքի տակ անթիւ սարերի կատարներ կան ցցված: Գրանցից մէկը իր վրա բարձրացրել է մի մեծ քաղաք, որին տուել են Շուշի անունը: Մերկ, վիթխարի ժայռերով շրջապատված այդ քաղաքը ընդլեկան անմեղ և անխորհուրդ կերտումներով մէկն է եղել, մէկը այն հարկաւոր անօգուտ բարձրութիւններից, որոնք իրանց անքնակ, անմտաւելի գազախները վեր են բարձրացրել որ երկնքից շատ ձիւն ու անձրեւ, շատ խոնավութիւն, մշուշ խլին: Բայց թուրք Փանահ-խանի մաքի կարողութիւնը տուել է այդ ժայռոտ ու բարձր տեղին այնպիսի նշանակութիւն ու կօշուղ, որ այսօր գոնէ միայն միամիտ, անպէտ կովկասցին չի խմանայ թէ Կովկասում Շուշի քաղաք կայ:

Շուշի...
Նրա եղանակը, կլիման, դիրքը նկարագրելու համար երկար ժամանակ է հարկաւոր և գորշ գոյնի ահագին քանակութիւն: Նրա արեգակի գեղեցկութիւնը, նրա երկնքի կապուտակութիւնը խմանալու համար հարկաւոր է մեծ փորձառութիւն սեփական անձի վրա. որովհետև խմանալու համար դեռ պէտք է տեսնել, իսկ տեսնելու համար հարկաւոր է համբերութիւն, սառնասրտութիւն, յաղթանակ համբերութիւն: Թողնենք նրա ընդլեկան իրաւունքը հաշուելու հաշուելու և բոլոր շուշիցիներ, մի և նոյն է թէ ինչ կը լինի երկնքից, նրանք երկնքին չեն էլ նայում:

Այդ քաղաքը իր ժայռոտ շրջապատի մէջ պահում է մարդկանց մի ահագին բազմութիւն: Լեռան գազաթը ամբողջապէս ծածկված է անհա-

մար անելով, որոնց մէջ բոլոր դրած ապրում են շատ և շատ գեղեցիկ և անպէտք մարդիկ, շատ և շատ սիրուն կարգեր ու կանոններ: Այդտեղ հաշիւը քաղաքի մեծ մասն են գրաւում, թուրքերը և իրանց: Երկու ազգերը ապրում են դատարար, բոլորովին առանձնացած միմեանցից: Թուրքը հայի մասին շատ և շատ բան գիտէ, որովհետև թուրք է, ոչ թուրք վախ չունի, գալիս է արձակ-համարձակ հայի թաղին է շրջում: Իսկ հայը թուրքի մասին համարեալ ոչինչ չը գիտէ, որովհետև վախում է թուրքից և թուրքի թաղից, այդ զարմանալի կեղտոտ, գաղաղի փողոցներին է այդ փողոցներում թաւալող «թուրքի լակտները», որոնց անհուն հայ մայրերը վախեցնում են իրանց երեխաներին: Թուրքերի ահագին թաղը հայերի համար անծանօթ երկիր է: Եւ էլ, իրեւ հայ, թուրքերին չեմ ճանաչում և հայերի մասին եմ խօսում:

Մեր հեղինակներից մէկը գրել է աշխարհագրութեան դասագիրք և այդ դասագիրքի վրա բոլոր հայագիր մանուկները այս սլոխով սովորեն. «Շուշի. գտնաւորական քաղաք է հարուստ է և վաճառաւոր, 25,000 բնակիչ ունի, որոնք մեծ ընդունակութիւն ունեն արհեստների և ուսման մէջ, յայտնի են իրեն նուագածուներ և երգիչներ»:

Երբեք չէ քաղաք: Այդտեղ հարստութիւն, այստեղ մեծ ընդունակութիւն, այստեղ նուագածուներ և երգիչներ: Այդտեղ թիւերով են կլիում ուղիք: Այստեղ Ողիստի պէս փայտի ձիւր են

չլինում: Այստեղ 25 հազար մարդիկ գեղեցիկ նուագածութիւններով և մեղրի պէս քաղաք երգերով փառաւորում են իրանց բարօրութիւնը, իրանց բախտը:

Այո, սիրելի է Շուշի քաղաքը, հրաշալի... Աշխարհագրութեան որ հեղինակը կարող է նկարագրել նրա ամբողջ փառքը, շքեղութիւնը: Միայն հարստութիւնը չէ նրա պարմանքը, միայն մեծ ընդունակութիւնը չէ նրա մարմնի ու արեւմտի, և միայն նուագաւորներն ու երգիչ չէ նրա բերանի խօսքն ու զրոյցը: Գիտ. շատ բան ունի նա, օ, շատ բան...

Յիշել Շուշու անունը և չը նկարագրել նրա աշխարհահռչակ «Թուրքանան»—այդ մի յանցանք է, որ յաւիտեան պիտի ծանրանայ աշխարհագրութեան վրա: Թուրքանան, վալը ամենայն յիշատակաց, արժանի քաղաք յիշողութիւնների, յաւիտեան կան ծովանոց հանգստութեան գերի դառնած անդամների, մոտաւոր կենսութեան, հարուստ, վաճառաւոր, ընդունակ, նուագածու և երգող քաղաք:

Թուրքանան, հրապարակ աղգային ամէն տեսակ շարժողութիւնների և անշարժութիւնների, կարեր և ամենակարեւոր տեղ խաբանչիւր հաւաքատ շուշեցու. օդ և ջուր, առանց որոնց մեռած, անկենդան կը լինի երգերի հարուստ քաղաքը: Թուրքանան մի ամբողջ աշխարհ է, թէև մի փոքր հրապարակ է Մի աշխարհ, որը նմանը մի հազարաւոր մեղեր և ուղեղներ, այդ աշխարհի խմանութիւնը, հրաշալի կրթութիւնը տալիս է

Նախ հակառակորդն ամուսնական կարգ ու կանոններին մեջ մարդը կարող է ունենալ միայն մի հաստ կին, նա բաժանվում է առաջին կնոջից, որը այլ ևս նրա կինը չէ, որը կրում է իր հօր ազգանունը, մարդը ապահովում է իր սեռական կյանքը բերելով պատկերում է մի այլ կնոջ հետ, որը և կրում է այժմ նրա ազգանունը, իսկ նախկին կինը զատապարտված է լինում երբեք չը պատկերվում... բայց յանկարծ մարդը մեռնում է, — և ահա մնում են երկու հաստ աղքատներ, որոնք երկուսն էլ կատարելաբար լուրջ առումով նորից ամուսնանալու Ուրեմն նոր, օրինական կին ունենալով, մարդը դարձնալ ինչ որ անբացատրելի կապերով կապված է մնում նախկին կնոջ հետ, որին ազատում է միմյանից իր մահով: Եթե աս տարօրինակ, անբացատրելի հակասություն չէ՞ — ապա ինչ է՞...

Եթե բաժանված կինը անբարոյակալ ու օւրիշ է, համար է զատապարտված եղել իր նախկին մարդու կեանքի ժամանակ երբեք չամուսնանալու, — այդ ինչպե՞ս է լինում, որ նախկին մարդու անբարոյական համարված կինը, որին նոյն իսկ անբարոյականություն պատճառով արգելված էր ամուսնանալու, իր նախկին մարդու մահից յետոյ՝ յանկարծ բարոյական է դառնում և այնպիսով իրաւունք է ստանում ամուսնանալու...:

Կամ, յաճորդաբար վարվելու համար՝ նրան ընդմիշտ, նոյն իսկ նախկին մարդու մահից յետոյ էլ, պետք է արգելվէր ամուսնանալ, որպէս անբարոյական ծանաշվածին, հարցի վրա այն տեսակետից, — նախկին որ առհասարակ բացարձակապէս, անկերև կերպով ապացուցված անբարոյականությունը միշտ պէտք է արգելէ լինի ամուսնական արդու կեանքի մեջ մտնելու:

Բայց այն ժամանակ հանգէս է գալիս մի նոր, աւելի զարմանալի հակասություն, եթե ապացուցված, անկերև, եկեղեցու օրէնքով ծանաշված կնոջ անբարոյականությունը պէտք է արգելէ լինի օրինական ամուսնական հաստատություն մեջ մտնելուն, — այն ժամանակ ի՞նչպէս է պատահում, որ եկեղեցական տեսակետից չեն արգելվում այնպիսի պատկեր, երբ մի որ և է երիտասարդ վեցներով ուղղակի հասարակաց տնից, իր վրա իրական և ապացուցված անբարոյականությունը դրոշմ կրող մի կին, որի համար անբարոյականությունը արդէն պարզ արհեստ է եղած, ձեռքից բռնած տանում է նրան սեղանի սուղե, — և եկեղեցին անմիջապէս օրհնում է այդ տեսակ պատկեր, առանց մի բառով անգամ հարցնելու կնոջ անցեալը:

Ահա ինչ զարմանալի հակասություններ է ստեղծում իրերի այնպիսի վիճակը, երբ կայ միմյանի ամուսնական միակողմանի բաժանման հնարաւորություն և չը կայ եր-

կու կողմերի համար ապահովումների հնարաւորություն:

Հետեւեալ անգամ կաշխատենք խօսել ապահովումների մասին և ցոյց տալ նրա անհրաժեշտությունը, մանաւանդ հայտնաբերելու և արդէն բարոյականությունն արդար ճշմարիտ Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Ապրիլի 5-ին, հինգշաբթի, թիֆլիսի կալուածական բանկի թատրոնում տիկին Սաթիկի Չուկիւն, մասնակցութեամբ հայ թատերասէրներին, տուեց առաջին անգամ մեր յայտնի դերասան Գ. Չուկիւնի «Վարժուհի» կոմէդիան, երեք արարուածով: Ահա այդ պիէսայի կարճ բովանդակությունը: Եւրոպայում ունում առած Ալիդեանց (պ. թատերասէր), որը մի հարուստ ընտանիքի դուստր է, վերադառնալով արտասահմանից՝ մշտնադաւ է հայ չլիմաները, հետաքրքրվում է իր մայրենի գրականութեամբ և ուսումնարանների դրութեամբ, նա յանձն է առնում հայոց դպրոցների մէջ Ֆիդիկայի դասերը: Այդտեղ նա ծանոթանում է նոյն դպրոցի վարժուհի Նուսիէ հետ (տ. Արախանեանց), որին հաւանում, սիրում է անկեղծ սիրով և Նուսիէ կողմից ևս վայելում է փոխադարձ սէր: Գ. Չուկիւնի կոմէդիայի գլխավոր հերոսները դասեր են: Օրիորդ Նուսիէն սիրում է նոյնպէս իր ընկեր վարժարաններից մէկը, Գէորգը (Թատերասէր), որին Նուսիէ թէ և յարգում է, բայց սիրել չէ կարող, իսկ այդ Գէորգին սիրում է Նուսիէ ընկերուհի, Սաթիկի վարժուհին (օր. Միքայելեան), որը տեսնելով Գէորգի տաճած անասանին սէրը դէպի Նուսիէ, ծածկում է կարծես մտադրում է այդ սէրը իր մէջ: Ալիդեանցի մայրը, Էլիմիան, (տ. Նովիկեանց) տեսնելով որ իր որդին սիրահարված է օր. Նուսիէի վրա և կամենում է պատկեր նրա հետ, ընտանեկան զանազան հանգամանքներ առաջ բերելով աշխատում է համոզել օրիորդին, որ իր որդու ամուսնութեանը անկարելի է և խօսք է առնում օրիորդից, որ դա, օր. Նուսիէ, կը հրաժարվի Ալիդեանցի առաջարկությունից: Օր. Նուսիէն որդու թեամբ կատարում է իր խոտուածքը և չը նայելով Ալիդեանցի աղաչանքին և թախանձանքին, հրաժարվում է ընդունել նրա առաջարկությունը, վճակելով իր մօր հետ միասին հեռանալ թիֆլիսից և ծառայել դաւաճական հայ դպրոցներից միում:

Մենք չենք կարող համաձայնել Գ. Չուկիւնի կոմէդիայի հիմնական գաղափարին հետ, որ մի աղքատ, հարուստ, կրթված և անկախ երիտասարդ, անկեղծ կերպով սիրելով մի օրիորդին և կամենալով պատկեր նրա հետ՝ միմյուսին ստանալ

նոյնպէս կրթված և աղքատ, թէ և չբար օրիորդից միայն այն պատճառով, որ երիտասարդի պատու և տղետ մայրը հակառակ էր մի այդպիսի ամուսնութեան: Առանց դրան էլ մեր գործնական դասընթացը մէջ ամուսնական կապեր հաստատելիս՝ սէրը մեծ մասամբ բացակայ է լինում և գլխաւոր դերը խաղում են զանազան երկրորդական հարկեր, և ահա պ. Չուկիւնի վերջապէս կարողանում է դանդաղ երկու անձնաւորութիւն, որոնք միմեանց անկեղծ կերպով սիրում են, և զբաղւած էլ ստիպված են հրաժարվել այդ սիրուց: Իրանց ամբողջ կեանքի ընթացքում զբաղւել միայն միայն այն պատճառով, որ մի տղետ պատու կը նախընտրէր բանը դուր չէ գալիս: Մեր կարծիքով մի այդպիսի սիրուց հրաժարվելու համար դանդաղ և յարգելի պատճառ էր հարկաւոր և ոչ թէ միայն յարգելի պատճառ, այլ նոյն իսկ մի անկախ և լի դրութիւն:

Գ. Չուկիւնի կոմէդիան ունի բնական արժանաւորութիւն և մարդ առանց ծանրանալու կարող է հետեւել պիէսայի գործող անձնութեան խաղին: Միմյուսից աչքի էին ընկնում իրանց նոր-հալի խաղով տ. Արախանեանց (վարժուհի Նուսիէի դերում), պ. թատերասէր և պ. թատերասէր: Տիկին Արախանեանց իր բնական և չը նորհալի խաղով իր վրա ունէր դարձած ամբողջ հասարակութեան ուշադրութիւնը, և հասարակութեան վարձատրում էր նրան բոլոր ծախսաւորութիւններով: Մտադրած սիրողներն ևս նպաստեցին իրանց խաղով կոմէդիայի վայելուչ ներկայացմանը: Ներկայացման անարարականութեան հեղինակը մի քանի անգամ բեմ կանչվեց հասարակութեան կողմից, որը վարձատրում էր նրան ծախսաւորութիւններով: Կոմէդիայից յետոյ ներկայացվեց Տէր-Գրիգորեանցի «Վայ քի իմ վէշը» ֆարս-օրովիլը, որը հասարակութեան բաւական դուրսնութիւն պատճառեց:

Թատրոնը լի չէր, և այդ հանգամանքը մեզ տրտնուեց մտածութիւնները ստեղծ: Մի մարդ, որը իր ամբողջ կեանքը նուիրել է հայ թատրոնական գործին, որը իր ծերութեան ժամանակն անգամ չէ դադարում թէ գրելու և թէ գործով ծառայել հայ թատրոնին, իր արտիստական կեանքի ամբողջ ընթացքում փորձում է վերջապէս գրել մի կոմէդիա, — և մեր հայ հասարակութիւնը իր անարարութեամբ և ստուգութեամբ վերադարձում է մեր թատրոնական պատկառելի գործիչին: Այդպիսի մի անտարբերութիւն կարող է սպանել ամեն մի եւրոպացի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՌԻՆ

Ապրիլի 4-ին, յայտնի երաժիշտ պ. Գլաւաչ, որը այժմ ծանապարհօրդում է Անգլիոյ լիւստրում, տուեց թիֆլիսի քաղաքային թատրոնում իր ա-

ռաջին կոնցերտը: Պ. Գլաւաչ ածում է իր նորա-հնար մի երաժշտական գործիքի վրա, որը մի տեսակ երգչին է պիանոի վրա, որին յարմարեցրած են պիանոն և օրգանը երկարացնում են պիանոի հնչիւնները, նմանացնելով այդ հնչիւնները երգչին հնչիւններին: Գլաւաչ մեծ աշուղտութեամբ իր առաջին կոնցերտում: Չէ կարելի րանալ, որ պ. Գլաւաչի նորահնար երաժշտային գործիքները ունեն իրանց արժանաւորութիւնը սակայն մենք կասկածում ենք, որ բուն պիանոն և օրգանը օգտու թաղկն այդ հնարաղիտութիւնից: Հանձնարելով երաժշտի պիանոի վրա իր անհատական զգացմունքները արտայայտելու համար ամենին հարկաւոր չեն ոչ ձայնը երկարացնող պիանոնը, ոչ էլ երգչին հնչիւնները: Պ. Գլաւաչի կատարելագործված հարմարումը շատ յարմար կերպով կարող է գործադրվել դիցուք և կեղեցիկներում, բայց նրա կատարելագործված և բաղադրւալ դարձած պիանոն՝ հազու թէ որ և է ապագայ ունենաց: Առհասարակ պ. Գլաւաչ անկեղծ լինելով, մարդ զարմանում է նրա ածելու արտասարգ տեխնիկայի վրա, — բայց բուն երաժշտական վայելչութիւն մարդ չէ գուր բերում կոնցերտից: Կողմը շատ է յոգնում այդ երաժշտական գործիքների խաղ և միակերպ հնչիւնները: Բայց մէկ անգամ լսել Գլաւաչի ածելը՝ ճշմարտ է, որ արժէ: Ապրիլի 4-ին թիֆլիսի թատրոնը լի էր: Ապրիլի 10-ին, երեքշաբթի օր, տաղանդաւոր երաժիշտը կը տայ թիֆլիսի կալուածական բանկի թատրոնում իր երկրորդ և վերջին կոնցերտը:

Պ. Գլաւաչ երաժշտական այնպիսի մի նշանաւոր հնչիւնաւորութիւն է համարվում Պետերբուրգում, որ, ինչպէս լուր է, մոռոլիդական լուստաւորութեան միմիայն, կոստ Գլաւաչով, յանձնարարել է նրան հետադուր թիֆլիսի այլ և այլ դպրոցներում ընդունված երաժշտական դաստաւորութեան սխառնութիւն:

ԱՆԼԻՍՏԱՆԻՐՈՂՈՒՄԻՅ մեզ գրում են որ Զատիկ տօնից յետոյ թատրոնասէրների խումբը պատրաստվում է հայերէն ներկայացումներ տալ Ալեքսանդրօպօլում: Խոսքաւոր են «Թաղթ խաղաղացող կիւնքը» և «Էլի մէկ դոյ» պիէսները:

Մեզ ինչպէս են ապագան հետեւալը: «Զորս տարի սրանից առաջ թիֆլիսի նախկին առաջնորդ, սրբապան Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանց, Նիքանաւորի ս. Աստուածածին եկեղեցու դրամական հաշիւները քննելու համար ընտրել էր երեք հոգուց բաղկացած հաշիւտեսներ և յանձնել էր նրանց, որ վեց ամիսը մի անգամ եկեղեցու եկամուտների մասին ամենաճիշդ հաշիւ պահանջեն երեցիկներից: Բայց յիշեալ եկեղեցու

հարուստ և վաճառաւաճ քաղաքին ապրելու, ուտելու, խմելու, քնելու, նորից ապրելու, նորից ուտելու, խմելու և էլի քնելու հրաշալի, երջանկաւոր և անփոխարինելի կարողութիւնը: Այդտեղ, այդ գեղեցիկ աշխարհում ծնվում, մեծանում և մեռնում են տաղանդներ ու հանձնարներ, բազմանում են երեկի քաղաքացիները: Այդտեղ է դաւաճական իտեղեցիկն առաւօտից մինչև կէսօր (ուտելու ժամանակը), կէսօրից մինչև երեկոյ (ուտելու և քնելու ժամանակը) կանգնում, խօսում, դատում, վճռում, այգտել, այդ հրաշալիքը մըթնոյնդրում, վխտում են աղգային «իշխանները», իրանց բարի, երանաւոր, իւրի մէջ լուրջացող աչքերը դէս ու դէն տանում, ուրախացնում հասարակ, միտադարձ, ամբողջ, որ հրճվում, հարստանում է թէ աղջկան հոյակապ իշխաններ ունի: Այդտեղ մի օրում, մի ժամում, կատարվում է անունների, հայրանունների և տոհմանունների բազմաչափ թաղանթութիւնը «իշ»-ի վրա: Այդ աշխարհը, որ Զուլա թողիկեանն է, ունի իր զբերականութիւնը, որ անհասարկ բարձր է աշխարհիս բոլոր փիլիսոփայութիւններից, սկսած Բուդդայից մի քերականութիւն, որ մարդու լեզուն խաղաղանք է տալիս, ինչպէս աշխարհային տերը, նայած թէ որտեղից է քալի գալիս, ինչեցից է տալիս գլուխը և նրա հետ սիրտը և սրբաւորն տուած բոլոր անբերանից գործիքները մեծի, իշխանութիւն ունեցողի առաջ: Իսկեքը, հասարակացութիւնը, բանականութիւնը փակում է մանր կողպէքի տակ և այդ կողպէքի բանալին տալիս հանգամանքների ձեռքը, դա մի զարմանալի քերականութիւն է, որ գեղեցիկութեամբ փողոցի ա-

պականութիւնից դուրս եկած լիտի տղային և բարձր, աղօթաւոր բարի հոգւում: Այդպիսի մի գիւթական տեղ է Զուլա թողիկեանն, նրա ամբողջ պատմութիւնը գրել դժուար է: Նրան պէտք է երկար տեսնել, քննել, իմանալ և հասկանալ: Թողնենք այդ մեծութիւնը, որի ընթացքում Զուլան Այդ քաղաքն ունի մի հատ բաղանիք և 80 հատ գինեատուն: Բաղանիքը թուրքի է, գինեատունը, ի հարկէ, հայերինն են, որովհետեւ առած կայ թէ՛ «հայից բէկ չի լինի, թուրքից գինեկաճառ»: Ցան հազարից աւելի հայերը այդ մի հատ բաղանիքում են լուսնում իրանց երջանիկ, իմաստով պահպանած մարմինները: Բաղանիքը մեծ է թուրքի համար, փողը է հայի համար: Յայտնի է, որ քրիստոնէական չը պէտք է պղծէ մարդաբէի որդիներին, և թուրքը, որ պահում է բաղանիքը հայերի թաղում, ուղղափառներին այդ պղծութիւնից դուրս պահելու համար, քրիստոնէական համար մի հատ փողոցի ու նեղ սենեակ է պահում, ուր դրանք իրաւունք ունեն լուրջաւոր, իսկ մնացած սենեակները մարդաբէի որդիների համար են: Կրկնումք մեր քաղաքային — մի քիչ չուր կը տայ քրիստոնէայի մարմինը լուսնաւոր համար, չի կամենալ մեր քաղաքային — մի քիչ չուր կը տայ միմյուս — բաղանիքի գոնիքը փակ են, թող հայը մարմինը, որտեղ ուղում է: Պէտք է ասել, որ շուրջին շատ է չը պիտի մտածէ այդ մասին, առաջինը նա ինքը շատ մարդը մարդ է, երկրորդը, նա ունի մի քաղաք, որ հռչակաւոր է իր լաւ օրով իր առողջարար դիրքով: Ոչ խօսելու է մօտեւում այդ քաղաքին, ոչ ժամատաւորը: Եւ այնքան անհոգ են, որ փողոցները չիսել են անհոգ-

բութիւնների ցուցահանդէս: Որովմէ փանահ-խանի հօրը, նա այնպիսի տեղ չէ քաղաք չիսել, որ մարդիկ մտածեն թէ ինչ է անմարդութիւնը — լաւ թէ վատ բան: Այդ քաղաքը գիշերվայ լուսաւորութեան պէտք է չունի, քանի որ ինքն այնքան լուսաւոր է, լուսաւոր: Որ քաղաքն է նրա պէս այնքան մօտիկ երկրները: Եւ այդպիսի բարձր տեղ կանգնած՝ նա ամենից շուտ ստանում է երկրի ամենաթաղանթը, դուրս, ամենամաքուր լոյսը: Եւ այդ քաղաքի ինչին է հարկաւոր գիշերվայ լապտերը: Ձեռ և միայն ձեռ համար են նշանակված քաղաք լուսաւորողները, նրանք ոչինչ գործ չունեն, նրանց գործն ինչն իրան է կատարվում: Այդ բարեհոգի լուսաւորողները կանգնում են կալիքանաւոր կովի տըռ-դած ծծերի մօտ, կիւում են, կիւում անդադար: Որքան միամիտ գառներ են... Իսկ հետեւից նախը կրկնում է ողորմաճանգի պատկերը մնացած խօսքը: «ուտելը, կիւելը տղամարդութիւն է, թող ուտեն, առանց ուտելու գործ չէ կատարվել»: Եւ երջանիկ ու անուղ զառնելը այդպէս էլ անում են: Կիւածը ուտում են և կերանները մարմինը համար ման են գալիս, իրանց բարեհոգի դէմքերը ցոյց են տալիս մարդկանց:

Հարուստ, վաճառաւաճ քաղաք է: Այդտեղ լինում են վաճառականները, որոնք իրանց բաղանիքը բարի գործերի համար ստանանների նշանաւոր ու չարականութիւնն են զրգուկ, մի քանի անգամ ամենաանմեղ կերպով սնանկացել են, ստիպված են եղել փող պարտք առնել իրանց մայրերից, քոյրերից ու կնիկներից և փոխաբեր ուտել են նրանց իրանց անկեր, խանութները, բոլոր

հարստութիւնները, և իրանք — ծի խեղճը — որպէս ամուղ գառներ, ձեռքները զրգանում դրած՝ քաշվել են մի անկիւն իրանց խաղաղ գլուխը անսիրտ պահելու համար: Մի սիրտն անձնազոհութիւն, որի վրա դարձանք են մնացել նոյն իսկ նրանց շուրաւած պարտատէրերը: Այդ անանկութիւնների մէջ — ինչու չը հաւատանք նրանց երդումներին — ոչինչ կեղծ, ոչինչ անբարոյական, ոչինչ հակամարդկային բան չէ կողի: Հարուստ է քաղաքը ոչ միայն այս տեսակ անմեղ զոհերով, այսպիսի վաճառականներով: Ո՛ր թէ որ տեսնելը... Եւրօպայի, լուսաւորված աշխարհի բոլոր թմադալին ասորանքները այստեղ են գալիս, այստեղ են ծախվում, այստեղ են վերջանում: Արքայութեան քաղաք վարուց է դուրս գցվել այս քաղաքից: Այդ քաղաքն են պցել առնելը, այն, ամենը առանց բացառութեան: Իսկ ու արժանի չէ գինեւոր շուշեցիների պահանջի դիմաց, խոհարարն էլ ոսկի քամար է կապում, իսկ քաղաքացի իր կնոջ հետ տուն է բերել ոսկի ժամացույցը: Աշխարհային այդ ամենամեծ բարիքը — հաղաւոր, զարգարանքը, ի հարկէ, գլխաւորապէս վաճառում է քեղքը սեռը: Դատ բնական բան է: Մի ժողովուրդ, որ յայտնի է իբրեւ նուազագուր երկին չէ կարող իր ամբողջ սիրտը, գրգայնը կարողութիւնը չը նուրբել կնոջը, այն արարած ծին, առանց որի նուազագուրութիւնը, երբ միտք բովանդակութիւն չունեն: Մեր քնարի բարիքը հնչում է դուրս և թուրս աչքերով, կամար յոյժերի համար: մեր երբը ծծերին է նուիրած, այդ սերգելի խառով ծածկված ծծերը ծծելու տնը՝ չանքին: Հապա ինչպէս չը դուրենք, չը դարդա-

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ԽՆԴԻՐԸ

ՄԱՅՆԱԳԱՐԱՐԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԻՎՈՐԱԿԱՆ
նշանները էլի չեն անհետանում մեր ժողովրդի
միջից, չը նայած, որ նա առկի լուրջ ինդիքներ
ունի իր առաջը դրած: Այս րէ ինչ քառման
տեղեկութիւն է հաղորդում «Արեւելի» Մաշի
թղթակիցը:

« 60—70 տարի յառաջ Մշտյ ազգայիններն 30 տան չափ հայեր իրենց մայրենի եկեղեցին թող լով պապականութեան գերիք կը նետուին չտորհն պատգաման քարոզիչներու չլացուցիչ խոստմանց ե նրկականներն բարեխաւելու ակնկալութեամբ, ե կը խողիին Հայաստանեաց եկեղեցին մտնել իբրեւ հերետիկոսի եկեղեցի, ե շատ անգամ ալ չն խղճար իրենց հայ եղբայրները տարապարտ անըլ ներայարտել, այսու ամենայնիւ իրենց ննջեցալ զերիկ հայոց գերեզմանոցը թաղելէ դեռ չն դա-
դրած:

«Վերա Մշակի ազգայինքն քանկոց արդէն ծանոթացած էին կաթիլիկ հայոց որ իրենց յատուկ գերեզմանոց մը գտնեն, և թէ այսուհետեւ չեն թողուր իրենց ննջեցեալները հայոց գերեզմանոցը թաղելու, սակայն կաթիլիկներն այս աղբարարութեան մոխի չեն ընել, և երբ երկու օր յառաջ կաթիլիկ ննջեցեալ մը թաղել կուզէին հայոց գերեզմանատունը, հայեր թոյլ չեն տար. խռովութիւնն այն ատիւճան բարձրացաւ որ հարկ եղաւ կառավարական միջամտութեան և զինուորականներ խիստ հակողութեան, ննջեցեալն թէն թաղուեցաւ ի վերջոյ նոյն գերեզմանոցը, բայց ինդիլը պաշտօնական հանգեամանք մը ստացաւ և այժմ կը յազուել երկու առաջնորդարաններու և կառավարութեան միջէն, տեսնենք թէ ինչ վախճան պիտուիննայ:

«Իբրևունքը չունին հայերն այդպէս վարուելու
երբ կաթողիկոսաց կողմէ իրենց ըրածէն աւելին
տեսած են: Անցեալ տարի հայ հօրէ և հայ. կա-
թողիկ մօրէ Մշեցի 3—4 տարեկան տղայ մը
քաղաքէն մի քամ հնուաւորութեամբ Առնիշ ա-
նուամով կաթողիկ գիւղ մը կը մտնէր և ճիւղ երեք
օր անթաղ մնալով կը հոտի, սակայն կաթողիկ
վարդապետը օրբապզծութիւն կը համարի հայ
անամը ժանկիւր գիւղի գերեզմանոցը թաղելու,
հակառակ որդեկորոյտ մօր այնչափ թախմաձնաց
և դառն արտասուք. պատճառ,—Հայաստանիաց
եկեղեցւոյ է գաւախ»:

ԱՐՏԱՔԻՆ, ԼՈՒՐԵՐ

—Աւստրիական կառավարութիւնը ձգտում է ցոյց տալ, որ բանտորական վերջին խառնակութիւնները իբր թէ պատահական բնաւորութիւն

քը հանգստացնել,—կանչում, հրամայում ես դու։
Խոնարհով եամբ ծունկ եկը չորում այդ հրամանի/
առաջ։

Օ՛ր, ինչպէս մոռանալ քո հայրենի բնութիւնը, ինչպէս մոռանալ այն լեզուն, որ դու պարզեւեւ ես քո հարազատներին, այն լեզուն, որ դատում, դատապարտում և վատացնում է աշխարհի բոլոր մարդկանց, իշխան Յիսմարիկից սկսած մինչև վերջին ջրկիրը, որ կիրակի օրը համարձակելով է նոր չուխայ հագնել և երկու գրվանքայ միս առնել իր երեխաների համար: Իսմարիկի մասին դատում ևս զուարճանալու համար, լսել ջրկիրի շքեղութիւնը շտապում ես նոր հարկ աւելացնել, որովհետեւ նա կիրակի օրը միս առնելու փող ունի:

Այդ սքանչելի լեզուն կարդ ու կանոն պիտի պահէ մեծաթիւները ու փոքրաթիւները մէջ։ Այդ լեզուն մանաւանդ հրաշքներ է գործում քու բարեխառն, զով օդը մէջ գեղեցիկ կերպով ծլած ու ծաղկած քնքոյշ սեռի շրջանում։ Ո՛վ կարող է նկարագրել այն հասնարը, այն անշէջ հոռանդը, որով այդ քնքոյշ սեռը իր լեզուն է բանեցնում։ Ասում են թէ այդ լեզուն տներ է քանդում, սըրտեր է փչում, անթիւ աստղեր է խաւարեցնում, մեղծ ու հանդարտ կեանքի մէջ թոյն է մտցնում, մի մաշկնոդ, դանդաղ կերպով սպանող թոյն։ Բայց շնաս չը կայ, թէ մի բան չը քանաղ չի, նորոգելի է, եթէ չը լսօսեն, չը արօրեն անմեղ մարդուն, նա կը բորբոսնի։ Գու, ի հարկէ, շատ լաւ են հասկանում այդ առնչը և ամենայն իրաւամբ խեղդում են չը գիտեն արտելից բերած, քո մէջ դրած դպրոցները, որոնք ծրարում են այդ բամբակաւ տնուտի, այդ գեղեցիկ ընդունակութեան

ուհեկին, եւ փոքրամասնութեան գործ են: Սակայն բոլոր տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ այդ բանութեան շարժումները հիմնականէսը նոյնն է, ինչ եւ ուրիշ տեղերում:

—Լուր կայ, որ գերմանական կառավարությունը մտադիր է փոխել այն խնտ և բացառիկ կանոնները, որոնք մի քանի ժամանակից ի վեր զոյթվում են ունեյն ֆրանսիական սամաններին մոտ, իշխան-օթարհակալում:

— Զանգիբարից հեռագրում են, որ արաբական պարագլուխները անձնատուր եղան վ իսմանին:

—Այս օրերն Բելլինում լայս է տեսել յայտնի դրող Մարտին Հիդեբրանտի մի բրոշյւրը, որը խօսում է Բիւմարկի հրաժարականի մասին: Գովասանքով խօսելով կանցլերի արտաքին քաղաքականութեան մասին, հեղինակը խիստ կերպով յարձակվում է նրա ներքին քաղաքականութեան վրա, և այն միտքն է յայտնում, որ Բիւմարկի հեռացնելը շատ օգտակար է գերմանական ազդի համար: Բրոշյւրը սկսվում է այս խօսքով: «Այնպիսի առանց Բիւմարկի էլ ես չա կերկրանայ»:

— Ստեղծիկ կարծում է, որ հենց որ Գերմանիան
կը զրաւէ Սուդանին կից աֆրիկական կենտրոնա-
կան երկիրները՝ Գերմանիայի և Անգլիայի մէջ
ընդհարումը անխուսափելի կը դառնայ:

—Բերքընում լուր է տարածված, որ Գերմանիայում ղիտաւորութիւն էայ վերացնել մաքսահարկը արտասահմանից ներմուծվող հացահատիկներէջ:

—Յարմարական «Gaulois» լրագիրը հաղորդում է, որ իբր թէ վիլհելմ կայսրը գերաւորութիւն ունի առաջարկել ընդհանուր զինաթափը և յայտնել էլզաս-լոթարինգիան մի անկախ և չէզօր երկրի՝ Բելգիայի կամ Եվէյցարիայի պէս:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐԱԵՐ

ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ, ԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 ապրիլի: «Journal de St Petersburg» լրագիրը մատնանիշ է անում, որ միջանի օտար լրագիրներ, մանաւանդ վերջին ժամանակներս, սխտեսմաբար Ռուսաստանի մասին տարածում են այնպիսի լուրեր, որոնց նպատակն է յուզել հասարակութիւնը, և դրա հետ միասին հաստատում է, որ նոյն իսկ օտար մամուլի մէջ սկսել են եռանդուն բողոքներ երեսայեղ տեսակ յանցաւոր վարմունքի դէմ: Լրագիրը առաջ է բերում «Memorial Diplomatique» լրագիրի յօդուածը, որի մէջ ասված է, որ հատարակաց խորհրդը խտուրէխմբ կը դատաւարտէ այն ձգտումները, որոնց նպատակն է ամենապակաս վաւոր ազիտատորներին գործելու միջոցներ տալ:

ԲԵՐՈՒՆ, 5 ապրիլի: Պոլսական սէյմի նիստում,

վրա: Թող կենը զարդարվի, պճնվի, ապրե՛ փա-
փուկ, ինչպէս մի իշխանի ոսկե վանդակում ապ-
րող սոխակ: Սոխակն ունի մի կրակոտ, խեղճից
հանող լեղու... Թող կեն արարածն է՛լ ունենայ
սուր լեղու, մարդ պարող, խորովող, հարկեր տե-
սակ կրակի վրա շուռ առնող, խաճճող ու ան-
հասկերստ լեղու: Գեղեցիկը գեղեցկի համար է:
Գու գեղեցիկի ես եւ քեզ համար պղը գեղեցկու-
թիւնը արարածայի է:

Անհող, անտարբեր եղիր, ուրախութեան, հա-
րստութեան և երգերի քաղաք: Մի ժամանակ Խա-
լայէլի որդին Յաքելօնի գետերի ափից հառա-
չում էր. «Եւ մոռանամ քեզ, Երուսաղէմ, թող
եւեկ էլ իմ աջը մոռանայ»: Բո որդիքն էլ այդ
բացայտութիւնն ու ուղորդման դէպքը քեզ:

Գարեհեալ խոսքա երկարացաւ: Եւ ուրիշ բան էի ուզում ասել: Այսպիսի մի գեղեցիկ, ոգեւորող տեղը միթէ՞ն նիւթի պակասութիւնն էլ լինէր ամեն մի տեսակ զբոն համար: Բոլորովին օտարութի հանգամանք, թողնելով այդ առատութեան, առ- միշտ երանեալ երկիրը, եւ հեռանում եմ, մասնաշաղկապ եմ դիպչում հայրենի քաղաքի մարմնին, օտար տեղի եմ դնում, օտար մարդկիներն եմ որոնում իմ «Գաւառական Հերոսներին» համար:

Ղուբմն, մնացիր բարով, հայրենի քաղաք։ Դու
արժանի ես լի բարձր անուան և արժանի ես որ
միշտ լինած, խաղաղ ու անվտանգ մնաւ։ Լաւ ա-
նիորժակ եմ ցանկանում քեզ, բարի օր և խաղա-
ղութիւն...

150

երեցիր ին պ. Ս. Ղևերթրանց (Բոյազէհանց) ոչ թէ վեց ամիսը մի անգամ, այլ նոյն իսկ տարինը մի անգամ էն հաշիւը. չէ տալիս առաջնորդից կարգված մարդկանց, և չորս տարւոյ միջոցում սրայն մի անգամ է հաշիւ տուել, չը հաշիւով որ միայն մարդիկ անդադար հաշիւ են պահանջում: Եկեղեցու գաւիթում ուխտաւորների համար անհետակներ կառուցանելու նպատակով այդտեղ յաճախող բազմաթիւ ուխտաւորներից ամին տալի վող է ժողովւում, բայց մինչև այժմ ոչ մի տնտեսակ չէ շինված, և թէ ինչ բանի վրա է դործ դնում յիշեալ նպատակով ժողոված փողերը պ. Ղևերթրանց՝ ոչ դրին յայտնի չէ: Յանկալի կը լինէր, որ պ. Ղևերթրանց չը հետևէր Երեցիտիս Աթլիմանցի օրինակին, որ պատիւ չէ կարող բերել իրան, և ի՞նչ ոչ վող ամիսը մի անգամ, դռնէ ամին տալի հաշիւ տար եկեղեցու եկամուտների մասին, այն մարդկանց, որոնք ընտրված են սրբազան առաջնորդից:

ՄԼՆԿՈՒՄԻՆԻ ԿԵԼՈՒ ՎԵՐԱՆ, ԱՄԻՆ ԱՄԻՆ ՀԻՄՆԱԿԱՐԱՐԱԿԻ
վրա, որտեղ կայացաւ անցեալ տարի կովկասեան
Գեղարասեանական ցուցահանդէսը, այժմ, ապրիլի
3-ից սկսած՝ բացվել են Թիֆլիսի Ուսորդական
Ինստիտութեան ցուցահանդէս: Նախկին ցուցահան-
դէսի պատկերները, որոնք դեռ եւ պահպանվել
են, այժմ բնակւած են որսորդական ցուցահանդէսի
էկսպոզիցիաներով: Այլ եւս պատկերներ, մանա-
ւանդ որսորդական ճներ, զանազան տեսակ ձիեր,
կենդանի աղբեր ճագարներ, թռչուններ, մարա-
ներ եւ այլն.—այդ բոլորը պատւում է, մանաւանդ
որսորդական գործը սիրող այցելողներին հետա-
քրքրութիւնը: Բացի որանից պատկերներում հան-
դէս են դրւած որսորդական հագուստներին եւ
կօշիկներին ճանճեր, որսորդական դէնքերի ալ եւ
այլ տեսակներ եւ այլն: Ցուցահանդէսին կից դաշ-
տում ամէն օր հրացանաձգութեան վարժութիւն-
ներ են լինում: Յերեկոյ ամիս՝ եւ զինուորական
երաժշտութիւնը: Ցուցահանդէսում կայ եւ բու-
ֆետ: Յուցանանդէսը բաց է ամէն օր, առա-
ւօտեան 9 ժամից մինչեւ 6 ժամ երկուոյեան:

ՄԼՆԿՈՒՄԻՆԻ ԿԵԼՈՒ ՎԵՐԱՆ 30 ԿՈՅԷԿ

Խառակյան թագաժառանգը, որը ճանապարհորդում է արևելքում զուգս զը Պոլեյցիոյ անունով հասել է արդէն Կովկաս: Այստեղից նորին բարձրութիւնը ուղիորդում է Անդրկասպեան երկիրն արդա այնտեղից վերադառնալով՝ Կուղորովի, ինչպէս լավ է, ռուսաց Հայաստանն է կայացնէ նրանն է Իմիածին:

Ապրիլի 4-ին տեղի ունեցած Կովկասյան Կայսերական Գլխատնտեսական ընկերությունն համադրվածոր նիստը, այդ ընկերությունն 40-ամսակի լրանալու պատճառով: Մաշթանը կառավարուց լետայ, ընկերությունն այժման փոխնախագահ

քեր այդ փափուկ արարածներին: Նմանազույթի-
նը հետո մնալ, քեր, ոսկով պատիր նրանց. ահա
թանազալին ականք, դեղին ոսկի, արծաթ, ազնիւ
չալ, թափշ ու զէպակ: հագէք, կապեցէք, կանխ
արեք: Այլ եւ չէ մնացել մի մարդ, որ աշայտի
փառաւոր դարդ ու զարդարանքի ճաշակն առա-
չը լինի: Կար մի հին, ասպետական ժամանակ,
երբ տղամարդու թիւն նշանակում էր քաջութիւն,
անճանաչուն թիւն: հիմա տղամարդութիւնը կնոջ
զարդարելն է: Զար լեզունքներ—դրանքից են նը-
րանք պակաս, Երուսաղէմ սուրբ քաղաք է, բայց
այնտեղ էլ չուն կայ—չար լեզուները նոր ժամա-
նակի այդ տղամարդութիւնը անասել չուայտու-
թիւն են անուանում, մի սարսափելի ակտ, որ
ամենից հեշտ է մարդկանց գլորում խոր խորխո-
րասները, Զարում: Զար լեզուներն ասում են
թէ այդ փաթմարութեան ետեք կանցնած է սե-
րեւ անանկութիւնը, որ ողորում է, աղիւղիլի ար-
տասունք է թափում: ասում են թէ մեր նորան-
տղամարդկանց մէջքն ու շլիկներ կտորվել է, պը-
ծել, շլակ չէ կարելի: Հարկը ու մի այս տեսակ
բաներ են ասում: Զրգարանութիւն է, ի հարկէ
կրողութիւնն այն է, որ մեր Շուշու կանայք սի-
րամարդից էլ չքեղ են նախշված: Զարդարանքի
պահանջը այն բանաստեղծական բարձրութեանն
է հասել, որ ամուսնութիւնը, հարսանիքը անիրա-
գիծելի բաղձանք է դառնում: Ամեն մէկն աշ-
խատում է, որքա՛ն լավ, ջանք անում, որ չքեղու-
թիւնը, զարդարանքը էլ չափ ու սահման չը ճա-
նաչէ: Արտն են, անում, օրից օր աւելացնում...

Ախալով երկուստարդները, որ աշխարհի համից
դ հաղիւ աղեղեղութիւն չունեն, մնում են մի

Կրտսերի մի ընդհանուր հայեացքը գցեց ընկերության 40 տարվա գործունեության վրա, և վերջացանք իր խօսքը, առից որ այդ գործունեության երկու զլխաւոր արդիւնքն են՝ Ազգեգործական դպրոցը և Կովկասեան ցուցահանդիսի կադմիլը: Այդ ճառից յետոյ տեղի ունեցաւ ընկերության անցեալ տարւոյի հաշւետւութիւնը: Ի պատիւ այդ օրվայ ընկերութիւնն անդառնալը ըրը ընդհանուր հաշիւերոյժ ունեցան Ռիֆլիսի օրը լոկաւ:

Կովկասեան բժշկական ընկերութիւնը ապրիլի 5-ին տարեկան ընդհանուր նիստ ունեցաւ: Այդ նիստին մի քանի ղեկավարներ կարգաւցկեան: Բժշկական ընկերութեան անդամները, մեր քաղաքի բժիշկները, նոյն օրը երեկոցեան «ընթերիք» վայելիցին «Եւրօպա» այգիում՝ ի պատիւ ընկերական տարեկարծի: Եղան մի քանի ոգեւորած ճառարարութիւններ:

Պարսից Շահի կինը, որը այս օրերս թիֆլիսով անցավ դէպի Եւրոպա, ինչպէս գրում են տեղական ուսու լրագիրներին թէ՛ Շահից, աչքերի չի անաղութիւն ունի և արտասահման է գնում բը- ժեկիւնու համար: Շահը, որ եւրոպական արտա- քին ձևերի սիրող է, պատուիրել է իր կնոջը Եւրոպացում հաճով և եւրոպական ձևով, որպէս զի իր արեւելեան եւրոպացիներ հասարակութեան ուշադրութիւնը չը պահէ:

Թիֆլիսում լուրեր են պատում, որ Պարսկաստանի արևելեան Նաճանգներում գաղնան տաք եղանակի հետ միասին՝ իսլամի անսկսել է սաստկանալ:

Բազումն վաղուց է որ երազում է մի լաւ քա-
ր զիչ է ունենալու մասին, որին տարեկան որոշ
ուտիկ պիտի տրվի, և որի պարտաւորութիւնը
պիտի լինի քարոտել Բազում և շրջականերում:
Գեղեցիկ միտք է դա, բայց Բազումի հառապակո-
ւիւնը այդպիսի լաւ միտք յղանալու չեաւ միակում,
ամենից առաջ պէտք է մտածէ այն մասին, թէ
որտեղից կարելի է ձեռք բերել լաւ քար զիչ,
որը ունենայ մուսաւր պաշար, եռանդ և խոսելու
հմտոյն: Գիտենք, որ բազուցիները հեշտութեամբ
կը հայկթային քարոզչի ուժիկը, բայց կը գտնվի
արեւիք հարկաւրի յատկութիւններով քարոզիչը,
— ամա նորոյ:

Լսում ենք, որ մտադրություն կայ այս տարի առհասարակ սովորականից առելի շուտ սկսել և շուտ վերջանել դպրոցների հարցազննություննա-րը, ի նկատի ունենալով այն վտանգը, որ ըս-պառնում է Պարսկաստանի խօլրան:

կողմ կանգնած, ձեռք վերցրած ամուսնութիւնից
ու զարդարանքից:

Բայց իմ խօսքը երկարացավ...

Երևու թէ երեք խօսք էի ուղղում ասուլ թո մա-
սին, հայրենի քաղաք, և որքան շատ խօսեցի: Քո
մասին—երեկ պշտէս է կարգադրած—կարճ խօ-
սել չէ կարելի: Գու ալքան մեծ մեծ յատկու-
թիւններ ունեն, այնքան չաղ ես թո ներքին բո-
ւոյնստիւնութիւնից, որ անկարելի է զեղ չը գտիլ,
սխալաբոյ առաւ չը հռչակել:

Վերա քաննաստեղծական ծուլությունը, քո մշտական քուճը, որ այնքան բարեբար թմուկեթխն է տարածում, կաշկանդում, քո լուռ, մեռելային անշարժությունը, որ այնպիսի սիրելի հանգստություն է պարզեցնում ամենը քննի և ամեն մէկին...
Վնչպէս մոռանալ։ Վու հեռու ես պահելու աշխարհի ցաւերից ու վշտերից. մի ամբողջ երկիր կտորոլում է սուլից, օդուժեկան աղաչանք ու պարտաւանք արայած աշխարհն է բռնում, բայց դու քո անդգալ ժայռերի մէջ կուշ եկած, սիրտդ մի հակայական ժայռ. դարձրած, ականջիլ մօտութիւն ես անցկայանում այդ օրնասական աղերասնութիւնը։ Ղրտնու պատճառը։ Բո ականջները դարձնալի կազմուածք ունեն. նրանք չեն լսում ուրիշ տեղից եկած ձայնը, թէ այդ ձայնը քո սիրը կըշտայնելու, իզոյլ ծածկելու յատկութիւնը չունի։ Վու լուռ ես մնում, որովհետեւ խելք ունես ապրելը և ապրուստի նշանակութիւնը հանճարեղ լի մաստուրեկամբ րմբռնելու։

Քնել, յաւիտեան քնել, մարմին հաստացնել ու
առաքողութանն, արիւն չտառնել, հոգին ու միտ-

